Ն/02.6/1596

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողների անունը, ազգանունը.**
   Տիգրան Ասատրյան
   Աշոտ Սուքիասյան
   Արամ Սահակյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
   Հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
   Անտառային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան, Շեքվեթիլի բնակավայր՝ 2024 թվական, փետրվարի 11-16
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիա UNCCD/Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն – REC Caucasus:
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի «Խաղաղ անտառ-նախաձեռնության» (FPI) շրջանակներում կազմակերպված՝ Հարավային Կովկասում անդրսահմանային համագործակցության վերաբերյալ խորհրդատվական աշխատաժողովին:
6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - «Խաղաղ անտառ-նախաձեռնություն» - նախապատմություն, նպատակներ, սկզբունքներ, ազդեցության ոլորտներ, ինստիտուցիոնալ կարգավորում, կոնվենցիաների և միջազգային համաձայնագրերի շրջանակում իրականացվող աշխատանքների սիներգիկ կապեր,
   - ոլորտին և նախաձեռնությանը վերաբերվող 2023-2024 թթ. արդյունքներ,

- երկրներում Կլիմայի Փոփոխության և Անապատացման երևույթների ազդեցությունները և ռիսկերը,
- երկրներում Դոնոր և Կառավարման կառույցների դերակատարությունները, շահագրգիռ կողմերը, մասնակցությունը ազգային և տարածաշրջանային ծրագրերին,
- համատեղ նախագծերի մշակում:

«Խաղաղ անտառ» նախաձեռնության նպատակն է ստեղծել գործնական հարթակ՝ խթանելու համագործակցությունը և փոխհամագործակցությունը՝ անդրսահմանային հետկոնֆլիկտային իրավիճակներում հողերի չեզոք դեգրադացիային (LDN) հասնելու համար: Այս հարթակը կուսումնասիրի ընդհանուր LDN թիրախների ստեղծումը և համատեղ նախագծերի մշակումն ու իրականացումը կառավարությունների, ՔՀԿ-ների և տեղական համայնքների մասնակցությամբ՝ գործընկերության միջոցով: Նախաձեռնությունը կարող է համագործակցային ջանքերի միջոցով ձևավորել վստահություն, մասնավորապես՝ անտառտնտեսության և հողերի վերականգնման ուղղությամբ:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովին մասնակցում էին «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարության աշխատակիցներ, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի Կառավարությունների լիազոր մարմինների, ինչպես նաև Միջազգային դոնոր կառույցների ներկայացուցիչներ, տարածաշրջանում իրականացող ծրագրերի և նախաձեռնությունների ղեկավարներ և պատասխանատուներ:

Աշխատաժողովին բացման խոսքով և ելույթով հանդես եկավ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազնության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Տիգրան Ասատրյանը՝ ներկայացնելով իրականացվող ծրագրերը և ազգային առաջնահերթությունները՝ միտված հողերի բարելավմանն ու էկոհամակարգերի վերականգնմանը:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նիստերին ներկայացվեցին թեմատիկ ելույթներ, վերոնշյալ թեմաների վերաբերյալ տարբեր երկրների փորձը՝ առանձին ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով, դրանց ուղղությամբ կատարված աշխատանքները:

Միջազգային բնապահպանական կազմակերպությունների կողմից առցանց ներկայացվեցին զեկույցներ ընթացիկ ծրագրերի և նախագծերի վերանայման, ապագա առաջնահերթությունների և Հարավային Կովկասի հիմնական գործընկերների հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

Մասնակիցների թվում էին Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի(GEF) առաջադրանքների ղեկավարը, Միացիալ Ազգերի Բնապահպանական Ծրագրի (UNEP) Եվրոպայի գրասենյակի ներկայացուցիչները, Կլիմայի փոփոխության և բնապահպանական ծրագրերի և ազգային ծրագրերի համակարգողները, Կլիմայի հարցերով ԵԱՀԿ խորհրդականը, Կլիմայական դիվանագիտության և անվտանգության գծով ավագ խորհրդականը, DPPA, UN-DPPA ինովացիոն խմբի խորհրդատուն, Գլոբալ հետազոտությունների ղեկավարը, Եվրոպական հանձնաժողովի համատեղ հետազոտական կենտրոնի աշխատակիցներ, Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի Անտառի Գլոբալ Ատլասի կազմման ծրագրի ղեկավարը՝ WRI, Համաշխարհային բանկի ներկայացուցիչը:

Կազմակերպված քննարկումներին Հայաստանի ներկայացուցիչները մասնակցեցին առանձին խմբային քննարկումների երկու տարբերակով՝ ազգային խումբ և խառը խումբ՝ բոլոր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Խմբային աշխատանքների մասնակցության միջոցով բոլոր երկրների ներկայացուցիչները ներկայացրեցին կատարված աշխատանքները և առկա մարտահրավերները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Երեք երկրների ազգային խմբերում քննարկման արդյունքում «Ընթացիկ ծրագրերի, նախագծերի և դոնորների քարտեզագրում» թեմայի վերաբերյալ Հայաստանը հանդես եկավ առաջարկով՝ իրականացնել ծրագրեր, որոնք կլիմայի փոփոխության պայմաններում միտված կլինեն հողերի չեզոք դեգրադացիային, անտառների և արոտավայրերի վերականգնմանը, կենսաբազմազանության պահպանման համար պահպանվող տարածքների կառավարմանը: Ծրագրերի արդյունավետ իրականացման համար կարևորվեց նորարարական տեխնոլոգիաներով տարածքների քարտեզագրման, մոնիթորինգի, տվյալների հավաքագրման աշխատանքների անհրաժեշտությունը:

«Տարածաշրջանային առաջնահերթությունների և կարիքների բացահայտում» թեմայով 3 երկրների խառը խմբերում տեղի ունեցած քննարկումների արդյունքում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչների կողմից որպես ազգային առաջնահերթություններ ներկայացվեցին անապատացման և երաշտի դեմ պայքարը, լանդշաֆտի և անտառների վերականգնումը, կլիմայի փոփոխությանը հարմարվողականությունը և էկոհամակարգերի վերականգնումը: Տարածաշրջանային առաջնահերթությունների թվում կարևորվեց հողերի կայուն կառավարումը (SLM), գյուղատնտեսության մեջ կլիմայի հարմարվողական մոտեցումները, էկոմիջանցքների ստեղծումը, տարածաշրջանային երաշտի ռազմավարությունը և այլն:

Աշխատաժողովի ավարտին ամփոփվեցին նիստերի ընթացքում քննարկված թեմաները, մշակվեց հետագա գործողությունների ճանապարհային քարտեզը և հաջորդ հանդիպումների անհրաժեշտությունը, ինչը կներկայացվի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարության հաստատմանը:

Հաջորդ հանդիպման հնարավոր ժամանակահատված նախանշվեց 2024 թվականի ապրիլ/մայիս ամիսները:

Գործուղվող՝ Տիգրան Ասատրյան

Գործուղվող՝ Աշոտ Սուքիասյան

Գործուղվող՝ Արամ Սահակյան

«20» փետրվարի 2024 թ.